№ 34. Սեպտեմբերի 6. — 1873 — Սեպտեմբերի 6. № 34.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ։

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցէով. Въ Типографію Редакціи Армянской Газеты „Мшакъ“.

Թիֆլիսում կարելի է ստորագրվել խմբագրատան մէջ (Ծրծրուեաւ առն.) և պ. Թաւուբեանցի խանութում։

ՄՇԱԿ

ԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ։

յայտարարութիւն տալէ առաջը պիտի վճարէ 10 հասար. տող համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն, ռուսերէն, վրացերէն, ֆրանսիարէն, գերմաներէն և թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Խնդրում ենք այն մեր բաժանորդներից, որք մինչև այժմ „Մշակի“ այս տարվայ վճարը հատուցած չեն, ուղարկել խմբագրութեանը իրանց բաժանորդութեան գինը։

Խմբագրութիւնը ընդունում է կէս տարվայ բաժանորդութիւնը յուլիս ամսից։ Կէս տարվայ գինը 3 րուբլ է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա պագայ սերունդը ինչ կասէ։—Ներքին տեսութիւն։ Մեր քաղաքացիների անհոգութիւնը։ Հարեցողութեան պատճառները։ Նամակ վաղարշապատից։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Շուշուց։ Նամակ Գանձակից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Պարկաստան։ Ֆրանսիա։ Բելգիա։ Շվեյցարիա։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—Առևտրական։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Էլի մի ճանապարհ կորցուած։

ԱՊԱԳԱՅ ՍԵՐՈՒՆԴԸ ԻՆՉ ԿԱՍԷ

I

Մեր կովկասեան հասարակութիւնը դեռ ևս ծանօթ չէ քաղաքանտեսութեան ամենատարրական սկիզբների հետ։ Նա չէ իմանում որ իւրաքանչիւր հասարակութիւնը պիտի նայէ ապագայ սերունդի վրա, որպէս իր շարունակողի վրա։ Ոչ մի հասարակութիւն իրաւունք չունի մի որ և է կարգադրութիւն անել, առանց մտածելու արդիօք օգուտ թէ վնաս պիտի բերէ այդ արած կարգադրութիւնը ապագայ սերունդներին։

II

Մի եւրոպական պետութիւն երբ մի երկար պայմանաժամով փոխառութիւն է անում, աշխատում է այնպէս կարգադրել վճարելու տոկոսների միջոցները, որ ապագայ սերունդներին ներկայ սերունդից արած փոխառութիւնը ծանր չը լինի....։ Այդ բանական չէ՝ քաղաքանտեսական գիտութիւնը ձայն է բարձրացնում և հարցնում է՝ իրաւունք ունի՞ արդիօք առհասարակ մի որ և է պետութիւն երկար պայմանաժամով փոխառութիւն անել և արդիօք այդ տեսակ վարմունքով մի հասարակութեան ներկայ սերունդը անտես չի՞ առնում ապագայ սերունդի իրաւունքը....

III

Ինչ որ ներելի չէ քաղաքակրթված պետութեան համար,—նորը պիտի ներելի չը լինի հասարակութեան համար։

Ներկայացնենք մեզ հիմի մի հասարակութիւն, որ իր երկրի մէջ եղած բնական հարստութիւնները անհաշիւ ծախսում է, այնպէս որ ներկայ սերունդի անհոգութեան պատճառով, ապագայ սերունդները կը զրկվին երկրի բնական հարստութիւններից, կ'աղքատանան։ Ներկայացնենք մեզ մի հասարակութիւն, որ անխնայ կոտորում է երկրի մէջ բոլոր եղած անտառները իր առօրեայ պիտոյքների համար, նորերը չէ անկում, այսպիսով կլիման քանի գնում է չոր է դառնում, քամիները աւելանում են, անձրևները պակասում են, լինում է երկրի անբերրութիւնը, որի հետևանքը լինում է սով ամբոխի մէջ.....

IV

Մենք ընթերցողի ուշադրութիւնը դարձնում ենք մեր ներկայ համարում տպված դ. Ընդրեաս Արծրունու անտառների մասին յօդվածի վրա, և հարցնում ենք՝ իրաւունք ունենք մենք, ներկայ սերունդս, վարվել ապագայ սերունդների հետ, ինչպէս որ անանտեսական կերպով վարվեց մեր վերաբերութեամբ հին սերունդը, հասարակական կեանքի մէջ։

Ժամանակ չէ՞ արդիօք յիշել, որ մենք հայերս ու վրացիներս հնդկաեւրօպական ճակատի ազգերն ենք, այն ցեղի ազգերն ենք, որոց դրօշակը եղել է միշտ՝ չը մտածել միայն ներկայի վրա, չը ծախսել ապագայի ժիժերը, այլ սերմանել ապագայի թէ բարոյական, թէ անտեսական կեանքի համար։

V

Ընտանեկից զուրկ երկիրը կործանիչ ազդեցութիւն ունի ոչ թէ միայն կլիմայի և ժողովրդի առողջապահական պայմանների վրա, բայց և մի երկրի քաղաքակրթութեան կանոնաւոր ընթացքի վրա։

Մինթէ կովկասաբնակ ժողովուրդը կամենում է սևերես դուրս գալ իր ապագայ սերունդների պատմական յիշողութեան առջև, ինչպէս որ սևերես դուրս եկան մեր առաջ անհաշիւ վատնող, ցրվող, ծախսով մեր սիրելի նախորդները, որոնց երևելի, կենսական փորձը այն բարերարութիւնն արաւ մեզ, որ մեզ աղքատացրեց և դարձեալ կաղքատացնէ.....

VI

Պատմութիւնը, լեզվագիտութիւնը, հնագիտութիւնը իրանց խղճմտաբար հետազոտութիւններով ապացուցին որ Հայերը ու Վրացիները հնդկաեւրօպական ճակատի ազգերն ենք, այն ցեղի ազգերն ենք, որոց դրօշակը եղել է միշտ՝ չը մտածել միայն ներկայի վրա, չը ծախսել ապագայի ժիժերը, այլ սերմանել ապագայի թէ բարոյական, թէ անտեսական կեանքի համար։

V

Ընտանեկից զուրկ երկիրը կործանիչ ազդեցութիւն ունի ոչ թէ միայն կլիմայի և ժողովրդի առողջապահական պայմանների վրա, բայց և մի երկրի քաղաքակրթութեան կանոնաւոր ընթացքի վրա։

Մինթէ կովկասաբնակ ժողովուրդը կամենում է սևերես դուրս գալ իր ապագայ սերունդների պատմական յիշողութեան առջև, ինչպէս որ սևերես դուրս եկան մեր առաջ անհաշիւ վատնող, ցրվող, ծախսով մեր սիրելի նախորդները, որոնց երևելի, կենսական փորձը այն բարերարութիւնն արաւ մեզ, որ մեզ աղքատացրեց և դարձեալ կաղքատացնէ.....

VI

Պատմութիւնը, լեզվագիտութիւնը, հնագիտութիւնը իրանց խղճմտաբար հետազոտութիւններով ապացուցին որ Հայերը ու Վրացիները հնդկաեւրօպական ճակատի ազգերն ենք, այն ցեղի ազգերն ենք, որոց դրօշակը եղել է միշտ՝ չը մտածել միայն ներկայի վրա, չը ծախսել ապագայի ժիժերը, այլ սերմանել ապագայի թէ բարոյական, թէ անտեսական կեանքի համար։

Ներկայ ժամանակ ամենից շատ պիտի խօսենք մեր ներքին տեսութեան մասին, որովհետև ներկայ ժամանակ ամենից շատ պիտի ուշադրութիւն դարձնենք մեր ներքին տեսութեան վրա։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՆՀՈԳՈՒԹԻՒՆԸ

Վաղուց մի շաբաթ է, որ Թիֆլիսում բաւական յաճախ սկսել են կրկնվել հրդեհները։ Վերջապէս օգոստոսի 30-ին այդ եւրոպէը այնքան նշանաւոր ընդարձակութիւն ստացաւ, որ ակամայ իր վերա դարձրեց ամբողջ հասարակութեան ուշադրութիւնը՝ Պէսկի անուանված մալականների թաղում այրվեցան 15 տուն.....

Թիֆլիսցին մինչև որ երես առ երես վտանգ չի տեսնի, երբէք չի մտածի զգուշացնող միջոցների վրա։ Մի կողմից շատ տները Թիֆլիսում ապահոված չեն, միւս կողմից ոչ ոք չէ մտածում գոնէ մի օրինաւոր ջրհան ունենալ ամբողջ քաղաքում։ Օրինաւորական հրդեհ-հանգցնողների մօտ կայ ընդամենը երեք պատահել էին Բօհէմիայի մէջ վերջին տարիները, այսպիսի են և Իտալիայում կրկնվող զարհուրելի և աղքատացնող հեղեղները։

Իսկ ինչ է հետևանք անդադար հեղեղների մի երկրի համար՝ մշակելի հողի պակասելը դորան հետևող աղքատութիւն և բացի սորանից անդադար էպիդեմիաներ, որոնք պատճառվում են օրգանական մարմինների փտելուց այն տեղերում ուր հաւաքվում է ցած գլորած ջուրը, ճահիճների կազմվելը, ինչպէս նոքա են, որ մենք առիթ ունենք տեսնել Սև—Ծովի ափերից սկսած ամբողջ Մինգրէլիայի տարածութեամբ, ուր որ ի գուր է մարտնչում մարդը ջերմերի և ապականած օդի դէմ։

Զը խօսելով այն անմիջական օգտի մասին, որ ունեն անտառները օդի մաքրութեան պահպանութեան և կլիմայի բարեխառնութեան համար, յիշված իրողութիւնները բաւական կը լինեն որ հասկացուի անտառների բացակայութիւնից յառաջացած վնասը։

Բայց մենք, մեղ յատուկ անհոգութեամբ փոխանակ ցանելու կամ տնկելու նոր անտառներ, ինչպէս անում են քաղաքակիրթ երկիրների բնակիչները, չարունակում ենք մնացած անտառներն էլ ոչնչացնել, նոցա այն ամենայն պէտքերի համար զործածելով, ուր փայտ տեղ արդէն վաղուց է, որ Եւրոպայում և Ամերիկայում գործ է դրվում քարածուխը, չարունակում ենք մօնդօլական կարգին հետևել, որի դէվիզն է՝ ապրել ներկայի համար և հեռուն ապագան։

Ընդրեաս Արծրունի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷԼԻ ՄԻ ՁԱՆԱՊԱՐՀ ԿՈՐՍՏԵԱՆ

«Մշակ» լրագրի անցեալ տարուայ 19-դ համարը իր առաջնորդող յօդուածի մէջ արդէն ընթերցողի ուշադրութիւնը դարձած է անտառների կովկասում նուազելու նշանաւոր հարցի վրա և տնտեսական աչքով քննելով այս երևոյթը, նկարագրել է մեր երկիրների անմխիթար ապագան։

Ներկայ յօդուածի նպատակն է ցոյց տալ դէպի որպիսի անդունդ մենք դիմում ենք, չարունակելով ևթարկվել մեր այժմեան անհոգ տնտեսական կարգին։

Հնդկաեւրոպական ցեղերին յատկանիշ է զորձել ոչ միայն ներկայի համար այլ, ըստ կարելութեան, ապագայ սերունդների գործունէութիւնը թեթևացնել, մշակելով մի հաստատ հիմք, որի վերա ապագայումը կարող է բուսնել և հաստատուն պահպանվել քաղաքակրթութեան չինութիւնը։ Եւրոպական գիտնականների չնորհով մենք այժմ վստահ ենք որ հայերը այս հնդկաեւրոպական ցեղին են պատկանում, բայց, համեմատելով մեր լեզու և մեր կեանքը, մենք անպատճառ պիտի հակասութիւնների հանդիպինք։ որքան որ առաջինից մեր հնդկաեւրոպական ծագումն անհերքելի է, այնքան մեր անտեսական կեանքից պիտի եզրակացնէինք, որ մենք մօնդօլներ ենք, կամ ընդունել ենք այս վերջիններից զոցա անհոգ տնտեսական կարգը։

Քաղաքակիրթ ազգերը մեր դարում հասել են դոնեա այն կատարելութեան, որ նոքա ամենայն, թէ բնութեան, թէ հասարակութեան երևոյթը աշխատում են մեկնել, բարձրանալով մինչև դորա պատճառները և եթէ այս երևոյթը վնասակար է կամ անհատին կամ հասարակութեան, դորա սկզբնական պատճառները որոնելուց յետոյ, բժշկութիւնը և քաղաքական գիտութիւնները առաջարկում են որոշ, փորձուած ճարեր։

Այսպէս էր, որ, վերջին տարիները, ուշադիր են եղել այն երևոյթին, որ այն երկիրներումը, ուր որ անտառներ պակաս են կամ անհետացել են մարդու ազդեցութեան չնորհով, սկսեցին յաճախել հեղեղներ, ցամաքութիւն և ուրիշ երևոյթներ, որ կործանիչ ազդեցին ժողովրդի բարօրութեան վրայ։ Այս իրողութիւնները առաւել մօտիկ և խոր քննելով, դեպ են թէ նոքա իրանց պատճառ ունեն իսկ զորանում, որ անտառները առանց խնայողութեան կարել են բնակիչների զանազան պէտքերի համար։

Քանի մի լուսք բաւական կը լինի այս երևոյթների մէջ փոխադարձ յարաբերութիւնը պարզելու։

Խիտ և տարածած անտառի յատկութիւնները մասամբ մեքենայական, մասամբ քիմիական կամ ֆիզիօլոգիական են։ Մեքենայականը այն է, որ սաստիկ քամիներ, որ մինչ պէտք է լինեն տափարակ երկրում, մի անտառի պարսպին պատահելով իրանց ճանապարհին, իրանց ոյժը կորցնում են, բաժանվում են և ուրեմն այն վնասակար ազդեցութիւն էլ չեն կարող ունենալ մարդաբնակ տեղերի վերա, փչացնելով չինութիւնները, չորացնելով ցանքերը, իրանց հետ տանելով օդի խոնաւութիւնը, և այլն։ Ֆիզիօլոգիական ազդեցութիւնը, շատ առաւել բազմատեսակ է, որովհետև իր հիմն ունի ծառի ֆիզիօլոգիական կեանքի մէջ։

Մի ծառ, որ մեքենայապէս բռնում է իր արմատներով իրան չրջապատող հողը, ձգում է թէ օդից թէ հողից իր կեանքի համար հարկաւոր խոնաւութիւնը։ Խոնաւութեան աւելորդը հողից դուրս գալով միաւորվում է և առուակներ է կազմում, որոնք անտառի միջով անցնելով, սկզբին նեթ չեն ևնթարկվում արեգակի չորացնող ազդեցութեանը։ Անձրևները, թէև սաստիկ լինեն, հազիւ կարող են վնասաբեր լինել, որովհետև հողը ծծում է այս խոնաւութիւնը և այսպէս կանոնաւորվում է առուակների հոսանքը։

Դորա հակառակը ինքն ըստ ինքեան հասկանալի է՝ մի երկիր, որ զուրկ է ծառերից, ոչինչ արգելք չէ դնում որ անձրևներից կայացած հոսանքը իր կործանիչ ազդեցութիւնը ունենայ։ Որքան աւելի վնասակար է, եթէ լեռնոտ մի երկիր, որ իր զառիվայրների վերա զուրկ է անտառներից, ևնթարկվի սաստիկ անձրևների՝ մի անգամ բոլոր արդիւնաբեր հողը, որ կարող էր կեանք տալ բուսականութեանը, ջրի սաստիկ հոսանքով ներքև է տարվում և հաւաքվում է լեռնի ստորոտին, մինչ որ այն տեղերը, որոնց նա ծածկում էր մինչև այն ժամանակ մերկացած ժայռեր են մնում։ Երկրորդ սաստիկ անձրև նա աւելի պակաս արգելք է գտնում արագութեամբ գլորվել դէպի ներքև, քանդել բնակութիւններ, որոնք գտնվում են լեռնի ստորոտումը և զրկել ողորմելի բնակիչներին իրանց ունեցածից։ Այսպիսի էին այն հեղեղները որոնք

կու կամ երնեք փոքրիկ ջրհաններըը, որոնց ջրի հոսանքի ոյժը այնքան անհնշան է որ գործ դրվելով հրդհի ժամանակ՝ ասելի բորբոքում է կրակը, քան թե հանգցնում.....

Հրդեհ պատահելու ժամանակ լինում է միշտ անասելի անկարգութիւն, ոչ ոք չը գիտէ ինչ անէ, ուր գնայ, որ կողմը պաշտպանէ: Պառավարող, ուղղութիւն տուող ոյժը չը կայ: Ընկրկող տների շրջակայքը լցվում են սովորաբար անգործ մարդիկներով, կանանցով, երեխաներով: Խազմութիւնը արգելում է կանոնաւոր գործակատարութեանը և երթևեկութեանը և միջոց է տալիս զանազան կասկածաւոր անձնների, որք ամեն ամբոխի մէջ լինում են, օգուտ քաղելով անկարգութիւնից, հետևել իրանց շահասէր և յանցաւոր նպատակներին.... Մի խօսքով հէնց որ ամբոխը հաւաքվում է ու ամենամեծ անկարգութեան մէջ շրջապատում է այրվող տները, իսկոյն յայտնվում են բաղմաթիւ գողեր և աւազակներ.....

Ընդ տեսակ զեղծումներին առաջն առնելու համար, հարկաւոր կը լինէր կազմել քաղաքի բնակիչներից (յանկացողներից) մի ընկերութիւն, հրշեմիներըը լինում են օրինակ Պերմանիայի և Շվեյցարիայի ամեն քաղաքներում:

Քաղաքի բնակիչներըը, որը նիւթական չնչին օժանդակութեամբ, որը անձնական աշխատանքով, պիտի մանակցէին այդ ընկերութեան մէջ:

Հարկաւոր չեն շատ մարդիկ, հարկաւոր է մի խումբ վճռողական անձերի այդ հիմնարկութիւնը գլուխ բերելու համար:

Թող այնքան գումար հաւաքվի, որ կարելի լինէր առաջին ժամանակ մի օրինաւոր ջըրհան բերել տալու:

Նրանք, որոնք հրդեհ հանգցնելու ընկերութեան մէջ յանձն կառնին անձնական աշխատանքը, պիտի ամեն հրդեհի ժամանակ ներկայ գտնվին, մի քանիսներըը, որք աւելի ուժեղ են, յանձն կառնեն մարմնական աշխատանքը, միւսներըը հրդեհի նշանաւոր կէտերում կառաւարութիւն կանեն, վերջապէս երրորդներըը կազմել կը տան մի շղթայ, որ մի կողմից արգելելու է անգործ մարդիկների խանգարող հօսանքին, ու չար նպատակներ ունեցող անձների ներկայութեանը, և միւս կողմից նպաստելու է գործ կատարողների կանոնաւոր երթևեկութեանը: Մեր ամբոխը լաւ աշխատել գիտէ այդ դէպքերում՝ աշխատողները միշտ կը գտնվին, բայց նորա չունեն առաջնորդ, կառաւարող ոյժ:

Վերջապէս երբ պիտի վերանայ անհոգութիւնը.....

Գ. Ա.

ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐը

Ընդ տարաւայ յուլիս ամսից, ինչպէս և յայտնի է, բոլոր Ռուկասում մոցնվեցաւ ակցիզի տուրքը ծխախոտի և արաղի վրա:

Մենք հաւատացած ենք, որ արաղի վրա ակցիզը պիտի սանձ դնէ ժողովրդի մէջ հարբեցողութեան սովորութեանը, մի կողմից որովհետև արաղը կը թանգանայ (թէև այդ արգելք չէ կարող լինել հարբեցողութեան իրանց նուիրած մարդիկներին), միւս կողմից որովհետև բացվող մի կ ի տ ա ն ն ե ր ի (դինետների) թիւը կը նուազվի:

Բայց նորերում „Кавказъ“ լրագրում տպված լուրը թէ „մինչև ակցիզ մոցնելը եղել են Թիֆլիսում 573 միկիտանի խանութ, իսկ ակցիզից յետոյ տուած է իրաւունք 516 միկիտանի խանութ բաց անելու և դեռ շատ բունակվում է նրանց բացանելու թոյլատուութեան թղթերի տալը“—այս լուրը հասցրից մեզ հետևեալ դատողութիւնների՝

Ընդ 516 միկիտանխաններից մեծ մասը ծախում է արաղը մանրավաճառութեամբ, իսկ մնացած քիչ մասը շ ի ր ա զ ի ք են, որոնցից շատ մասը նոյնպէս մանրավաճառութեամբ ծախում են և վերջապէս վեդրայով ծախողները, որոնց արգելված է մանրավաճառութեամբ ծախել: Նրանք, որք մանրավաճառութեամբ չեն ծախում, հալիս մի քառորդ մաս են կազմում ամբողջ 516 թուից:

Իսկ մնացած երեք մասը 70,000 հոգու Թիֆլիսի բնակիչների համար դարձեալ մեծ թիւ է, համեմատելով, օրինակ, 810,592 բնակիչների Վիէննա քաղաքի հետ, որտեղ միայն 262 արաղ ծախող կայ, 1870 թուի հաշուով (տես. „Вѣстн. Европы.“ № 1. 1873):

Թիֆլիսում այսքան շատ միկիտանի խանութները ցոյց են տալիս ժողովրդի հակումն դէպի արբեցողութիւնը: Դեռ ևս մեր ստորին դաս ժողովուրդը այնքան անուս է և վայրենի կեանք է վարում, որ ընկնում է որոշ դասների մէջ, իսկ արբեցողի համար որոշ դասները լինում են՝ միկիտանխանների շատութիւնը և նրանց մեծ թուից առաջացած մրցումն, երբ նրանք աշխատում են ամեն միջոցներով գրաւել իրանց կողմը ռամիկ ժողովուրդը:

Դարձեալ մի պատճառ արբեցողութեան այն է լինում, որ մեր միկիտանխանների մեծ մասի մէջ միաւորած են գինետունը խոհանոցի հետ, որտեղից որ մեր բոլոր ստորին դաս ժողովուրդը, սկսեալ օրական մշակից, մինչև արուեստաւորը և մանր խանութպետերը, իրանց կերակուր են ստանում, այնպէս որ շատերը դիտաւորութիւն էլ չունենալով գինով կամ արաղով ճաշելու,—պատահելով զրգռիչ շարժառիթների, ենթարկվում են ընդհանուր հօսանքին: Ասենք թէ երկու ծանօթները միմեանց պատահում են,—նրանց հրաւէրըը լինում է միշտ միկիտանխանում....

Իսկ երրորդ պատճառ արբեցողութեան այն է որ մեր միկիտանխանների մեծ մասի տէրերը ուշադրութիւն չեն դարձնում իրանց հիմնարկութեան մէջ բարոյականութեան պահպանվելուն:

Մեր բոլոր խօսքերից դուրս ենք բերում հետևեալ եզրակացութիւնը ա). ցանկանալի է որ միկիտանխանների թիւը պակասի, բ). որ խոհանոցները բաժանվին միկիտանխաններից, և գ). որ աւելի ճիշդ և խիստ պօլիցիական հսկողութիւն լինի միկիտանխանների բարոյականութեան վրա:

Ընդ ժամանակ բաւականանում ենք այսքանով:

Գ. Մեհրաբեանց

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

«Մեղու Հայաստանի» լրագրի օգոստոս ամսոյս 30-րդ համարում ի միջի այլոց կարդացի պարոն Հաւր-հերի հաղորդած լուրերից հետևեալ տեղեկութիւնը, որն որպէս ինձ նմանապէս իմ բարեկամներին ու իսկապէս յայտնի եղեալ անձանց չատ զարմացրեց, պատճառ որ եթէ ամեն մի լուր կամ տեղեկութիւն այսպէս ստոյգ և ճշմարիտ են ինչպէս պ. Հաւր-հերի և նորա նմանների հաղորդածները, այն ժամանակ պէտք է ափսոսալ այն չարաթաթերթին, որ զետեղում է իւր մէջ անհիմն ու թիւր տեղեկութիւններ, և ցաւիլ նրա ընթերցողների վերա: Պ. Հաւր-հերը գրում է «Էջմիածնի իբրև սեփականութիւն ունեցած Մաստարայ գիւղը այս տարի Սրբազանների մէկի բարեկամի կալաւ տուած լինելով խիստ նեղութեան մէջ է գտնվում, որոյ մասին հրաւիրում է Նորին Վեհափառութեան ուշադրութիւնը, ապա թէ ոչ Շահրիարցոց նման չարիքներ է պատրաստվում, որ ունի ականջս լսելով լուիցէ»:

Պէտք է ասած որ Նորին վեհափառութիւնը այն օրից որ մտել է սուրբ Էջմիածին առանձին ուշադրութիւն է դարձրել նոյն վանքի կալուածների վրա, և հաւատի տեղեկանալով որ այնքան մեծաստրած, որպէս վաղարշապատ, Եղվարդ և այլ գիւղօրայքը, ըստ իւրեանց եկամտից օրինաւոր արդիւնքներ չեն հատուցանում Աթոռոյն, յարմար և օգտաւէտ համարեց որ այս տարի անչարժ կալաւ տրուի, որոյ աղագաւ աղգային լրագրների և երևանու պօլիցիայի և գաւառապետի միջոցաւ հրատարակեց այդ տեղեկութիւնը որպէս զի ցանկացողքը կապալաւ ընդունելու վանքապատկան գիւղօրայքն դան Սիւնոյն, և առաջարկեն իրենց պայմանը: Նշանակեալ օրն ի թիւս այլոց ներկայացայ և ես և առաջարկեցի Եղվարդ գիւղի համար չորս հազար րուբլի, որ մինչև 1873 թիւը միշտ թէ գիւղացւոց ձեռքին և թէ վանքի կառավարչաց երկու հազարից աւել չէր տուած էջմիածնին արդիւնք, այսինքն մինչև մեն աւել անցեալ տարիների վերա: Համարեայ թէ գրվում էր պայմանագիրն երբ Եղվարդցիք եկին և առաջարկեցին իմ տուած գումարն, այսինքն չորս հազար րուբլի. Վեհափառ Կաթողիկոսն զիջանելով նոցա որպէս վանքական գիւղացւոց, թողուց նոցա վրա, իսկ ինձ առաջարկեց միւս գիւղօրայքն, այսինքն Վաղարշապատն և Մաստարան, որոնք և ինձանից ինձ վերա, և ես անցեալ տարիների գիւղացւոց տուած արդիւնների կրկնապատիկն չնորհելով էջմիածնին, օրինաւոր պայմանագրով ընդունեցի ինձ վերա յիշեալ գիւղօրայքն, և ոչ թէ էջմիածնի եպիսկոպոսի բարեկամի վրա, որ բոլորովին զրպարտութիւն է և թիւր կարծիք: Եթէ պ. Հաւր-հերը կողպայ աղահանքերումը (ինչպէս լսում ենք նա այնտեղ է ծառայում) չժողովէր այդ լուրը, այլ նոյն իսկ Մաստարումն կամ Վաղարշապատումն, այն ժամանակ կհամոզվէր իմ խօսքերիս ճշմարտութեանը, և կխղճահարուէր իւր անհիմն տեղեկութիւն հրատարակելուն վրա: Բայց եթէ պ. Հաւր-հերը իւր հաղորդագրութեամբը կամենում է հասկացնել ընթերցողաց որ ես եմ եղբօր որդի էջմիածնայ միաբան Յովհաննէս Արք-Եպիսկոպոսի Շահխաթունեանց, այն ժամանակ ուղիղ է նրա հաղորդած լուրը, բայց այնու ամենայնիւ զուր են նրա վրդովմունքը, որովհետև Յովհաննէս եպիսկոպոսը արդէն քսան տարի է որ վախճանել է. ուրեմն այդ մի պարզ հասկանալի բան է որ մեռեալ միաբանքն էջմիածնի, ոչինչ ազդեցութիւն չեն կարող ունենալ կենդանի ազգականաց վրա, էն էլ չեմ կամենում ասել որ եթէ չիչեալ եպիսկոպոսի կենդանութեան ժամանակը ևս լինէր նրա ազդեցութիւնը երբէք չէր կարող ուռնենալ պ. Հաւր-հերի երևակայած վնասակար հետեւանքները:

Եթէ պ. Հաւր-հերը չի հաւատալ այս իմ գրածների ուղղութեանը, ես պատրաստ եմ առաջարկել իմ պայմանագրի պատճէնը, որն օրինաւոր կերպիւ վաւերացուցած ստացած եմ Սիւնոյից:

Օգոստոսի 25, 4873.

Վաղարշակ Շահխաթունեանց

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

«Մշակ» չաբաթերթի 32-երորդ համարի մէջ Յարութիւն Աղնաւուրեանցը իբրև կարծեցեալ աղա հանդէս դուրս գալով անամօթաբար սուտ է համարում այն իմ յօդուածի ճշմարտութիւնքը, որոնք զետեղուած էին նոյն լրագրի 29-երորդ համարի մէջ, ուստի գարձեալ պարտականութիւն եմ համարում ճշմարտութիւնը պաշտպանելու համար այս առթիւ ասել մի քանի խօսք մասամբ լրացնելով անցեալ յօդուածի պակաս մնացածը:

ա. Աղնաւուրեանցը չարաչար սխալվում է և մեղանչում է ճշմարտութեան դէմ սուտ համարելով Ախալցխայի հասարակութեան միջին դասի ձայն չունենալը, որոյ կենդանի ապարոյցներից մէկն կը պատմեմ ահա: 18...թուին անցեալ յօդուածիս մէջ յիշեալ ինժիներ մշակների վերակացու աղան, լինելով քաղաքիս դէպուտատ, իբրև իւր սեպհականութիւն ծախել է քաղաքի պատկանեալ մի տուն մի Հայ-կաթոլիկ Ախալցխայեցի պարոնի և ստացած գումարն չէ ներկայացրել դէպուտատական ժողովին և չէ գրել հաշուեմատեանների մէջ: Քաղաքիս հասարակութիւնը պահանջում է իւր սեպհականութիւնը յիշեալ դէպուտատ աղայից բայց չէ կարողանում իւր նպատակին հասնել, որովհետև բարեկամ և ազգական աղաներից ոմանք լռեցնում են արհեստաւորաց ձայներն «խանթէս ել» սպառնալիքով և 30%-ով ժամանակը չը լրացած պարտքերն պահանջելով: Ինչու այսպիսի վայրենի բարբառոսութիւն թագաւորում է նորա բարեկամ աղաների մէջ.—որովհետև նոքա այն տարուայ ոչ գլխայարկն են տուած և ոչ տան յարկն: Իբրև պարզ ակսիոմայ երևում է որ նոքա պարտական են երախտամոռ չը լինել, այլ պիտի պաշտպանեն իւրեանց բարեկամ դէպուտատ աղային, որ նա ևս չը մերկացնէ նոցա սոյն օրինակ ասիական յիմար քաղաքավարութիւնը կամ ծայրական հրէական ժլատութիւնը...Թող այստեղ մտաբերէ Աղնաւուրեանցը իւր Մկրտիչ Աղնաւուրեանցի՝ եղբօր քաղաքի 3 հազար և մի քանի ռուբլի վայելուչ գողութեամբ կլանելու պատճառով որպէս խայտառակուեցաւ և որպէս պիտի խայտառակուի այսուհետև ևս:

բ. Աղնաւուրեանցը յափշտակօրէն նկարագրում է անսահման ստախօսութեամբ կարապետեան և եղիսաբեթեան ուսումնարանաց հիանալի հարցաքննութիւնքը, որոնց երբէմն հանդիսատես էրին միայն ուսումնարանաց չինութիւնների չորս անչունչ պատերը տեսչի և վարժապետներից մի կամ երկուքի ներկայութեան հետ: Պիտի հասկանայ արդեօք վերջապէս ազա Աղնաւուրեանցը, որ հեռու է հեռու կարապետեան և եղիսաբեթեան ուսումնարաններից յառաջադիմութեան կայծը, քանի որ նոցա մէջ նորաբոյս երկսեռ սերունդներին նորա նման ճոռոմաբան ճարտասան և փիլիսոփայ Ագոնց ճարտասանութեան տրամաբանութեան և փոած Զամչեանի քերականութեան անգիր դասեր կաւանդէ, և քանի որ զրպանի հարստութեան հմայուօղ անկիրթ հոգաբարձուք պիտի ունենան, որոնց գործը միայն է, եղել է և պիտի լինի միշտ կախ, հայհոյանք և անբաւականութիւն և քանի որ մութ անկիւններում կոյրի նման պէտք է խարխափեն տգիտութեան մէջ: գ. Երաշխաւոր և տղայական ցնորքաւ վայելուչ ստութեամբ Յարութիւն Աղնաւուրեանցը իւրահնար ամբողջ թուերով և խառն կոտորակների հաչիւներով կամենում է ուրանալ իւր հօր՝ կարապետ Աղնաւուրեանցի 12,060 ռուբլի եկեղեցուց անյետադարձ գումարը: Կարապետ Աղնաւուրեանցը 1863—1868 թիւը ոչինչ երեցփոխանական հաչիւ չէ տուել հասարակութեանը, իւր ինքնակոչ հաչուատէս Նիքոլոս, Մարկոս ու Թաթոս բարեկամ աղաներից հինգ անձինք միայն իսէր խարեբայութեան ստորագրել են մուտքը սակաւացած և ծախքն բազմապատկած մատեաններն և ուղարկել են կօնսիստօրիս: Ժողովուրդը իմանալով այս խարդախութիւնը, խնդրագրով վերադարձնել տուեց հաչուէմատեաններն և տեղւոյս կամենդանտի, Պօլիցիական հայ աստիճանաւորների և բանիմաց անձանց ներկայութեամբ քննելով մատեաններն, գտան անթիւ թողնուած մուտքեր և սուտ ծախքներ, որոնց գումարն հասաւ 12060 ռուբլեայ: Ժողովրդի բողոքը լսելով Սիւնոյն էջմիածնի, հրամանագրով սաստիկ հրամայեց Հոգևոր կառաւարութեանը անյապաղ հաչիւ տեսնել, ինն հաչուատէս անձամբ: Սուքիաս վարդապետ Պարզեանցն իւր արբանեակ աղաներից չը կամենալով վերջացնել իւր մտիկ յարաբերութիւնքը, անպատմելի ողորմածութեամբ վճռեց, որ Աղնաւուրեանք ատն միայն 120 ռուբլի, այսինքն մանեթին մէկ կօպէկ, չը նայելով որ մնանկ վաճառականներն տալիս են մանեթին 20 կամ 15 կօպէկ: Սուքիասը այդ գումարի համար կազմեց օրագիր, որուն չեն ստորագրուած հաչուատէաներից չորս հոգի և քարտուղարն, ինչպէս յայտնի կերևի կօնսիստօրի այն օրագրութեանը, որ եղև 19-ն դեկտեմբերի 1868 ամի № 442: Աղնաւուրեանցի կէսատուած որ Յիսարչաւ աղա կը կոչուի, իւր նման ազգականներով, փեսաներով և փիլիսոփայ նախապաշարեալներով 9 կամ 10 տարեկան տղայոց հասարակական և ազգային գործերը խանգարելու համար զանազան սոցա վերաբերեալ խնդրոց ներքոյ ստորագրել է տալիս ի վնաս ազգի և եկեղեցւոյ և ի փառս իւր անկիրթ անուան: Այսպէս ստութիւնքը միշտ տարածուած են աղաների կամ ազգի ցեցերի ժլատութեամբ և իւրեանց արբանեակ յարութիւն Աղնաւուրեանցի միջնորդութեամբ: Մնացածն կը խօսեմ մի ուրիշ անգամ այժմ կը վերջացնեմ յօդուածս յետագայ յառաջանքով, «ողբամ զձեզ աղայք և հոգաբարձուք ուսումնարանաց Ախալցխոյ»:

26-ն օգոստոսի, Պօղոս Քաթանեանց:

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

Շուշուայ Հայ հասարակութիւնը չունի ընկերական կեանք, և թէ ինչ է մէկ քաղաքի բնակչաց ընկերական կեանքը չունեն Շուշեցիք նոյն իսկ սորա գաղափարը:

Շուշուայ մէջ ամենայն արդիւն դիպուածի բերմունքն է և ոչ թէ ժողովրդեան դիտմամբ ձեռք բերած վաստակը: Անողորմ և կոյր դիպուածը անկանոն և աննպատակ մղում և հալածում է Շուշեցւոց, որոնք հողմէն առաջն ընկած աշնան տերևի նման երբեմն լաւ երբեմն վատ տեղի են հանդիպում: Շուշեցիք իբրև մի քաղաքի բնակիչք մին նպատակ չունեն:

Թէև անուրանալի է որ Շուշի կովկասու այս կողմի քաղաքաց մէջ ամենից դեռահասն է և կրթասերը, և թէ իր ժողովուրդը զիւղացու պանդխտներից է կազմուած, բայց և այնու ամենայնիւ չատ երևելի և նշանաւոր բաներ են տեսած Շուշեցիք, ուստի և կարող էին ու պարտական նորան հետևել, բայց զանց են արել: Շուշեցիք դաստիարակութեան ու ուսանց արժէքը չեն հասկացել, և

աղջկանց դաստիարակութիւնը որ ամէն բարելաւութեան ու լուսաւորութեան հիմն ու մայրն է առաւել զարդ և չռայլութիւն են համարում քան թէ անհրաժեշտութիւն։ Շուչեցիք չատ կարող էին մասնաւոր տներում ուսեալ վարժապետներ և վարժուհիներ ունենալ Եւրոպայից բերած, բայց ա-ւելորդ են համարում և ցարդ մէկ հատ չի գտնուել։

Շուչեցիք հոգս չունեն բնականաբար աղքատաց ու որբոց կրթութեան համար թէպէտ և հասարակութեան այդ բնծաներից չարունակ խայթվում տանջվում են։ Շուչումը ոչ որբանոց, ոչ հիւանդանոց, ոչ աղքատանոց և ոչ մին այդպիսի մարդասիրական հաստատութիւն կայ։ Բայց մարդ լինելն ու քրիստոնեայ լինելը կայանում է մարդասիրութեան վերա և ոչ թէ փողի։

Արհիպատիւ Եպիսկոպոսին ձեռքիցը Շուչեցիք իրրև չնորհք ու ողորմութիւն մէկ վարժարան են ստացել։ Վեհափառ Կաթողիկոսն կամենալով ազգին և եկեղեցւոյն պայծառութիւնն ու բարեկարգութիւնը ճոխացնել, կարգադրել է, ինչպէս արդէն ամենեցուն յայտնի է, որ չամուսնացեալ հոգևորականաց ստացուածքը իրենց մեռնելէն զկնի էջմիածնայ պատկանի։ Անտարակոյս խոհեմ և բարի անօրինութիւն է սա վեհափառ Տէրիցը. քանզի այնուհետև կատիպուն վարդապետք և եպիսկոպոսունք, որ արդէն մերժած են աշխարհական կեանքը, չմերձենալ հարստութիւն դիզելու փորձութեանը, ուստի և առաւել ջերմ եռանդիւ կծառայեն եկեղեցւոյ ուխտին։ Սակայն Ջալալեան Սրբազան Արքեպիսկոպոսն կամենալով իր սեփհական ստացուածքը չթողուլ ժառանգներին որ ըստ իւրեանց հաճոյից գործածեն, ի կեներին որ ըստ իւրեանց հաճոյից գործածեն, ի կենդանութեան նուիրեց բարի նպատակի և իր անջօքը տեսաւ յանուն իւր կառուցած չինութիւնը։ Անկրկայ եմ որ հիմա չատ վարդապետներ ու եպիսկոպոսներ կան Ռուսիոմն որ կամ չատ կամ քիչ դրամ ունեն և տարակուսանաց մէջ են թէ ինչ է ժառանգելու իրենց այդ հարստութիւնը և ինչ բանի է գործածելու։ Մենք կարծում ենք թէ Սրբազան Արք-եպիսկոպոս Ս. Ջալալեանցին հեռատեսութեան արարքը չարմար է բարի օրինակ լինելու, որ այն սրբազան հայրերն էլ, որոնք թէ իրրև հայրենական ժառանգութիւն թէ իրրև իրենց ձեռաց ու աչխատանաց արդիւնք ստակ ունեն, գեթ ի կենդանութեան իրենց ձեռքը նուիրական հաստատութիւնք կառուցանելու գործածեն։

Սարգիս Ջալալեանցը ոչ թէ միայն կենդանացրել է քաղաքիս արու մանկանց ուսումնարանը բայց նաև իգական սեռի դաստիարակութեանը համար կանգնեցրել է մի չքեղ չէնք։ Հարկաւ չի վրիպիլ մեր Արքեպիսկոպոսին տեսութիւնիցը այն իրողութիւնն էլ, թէ մէկ դպրոց լոկ իր քարերովն ու պատերովը, որչափ պանծալի էլ լինի, տակաւին դպրոց չի ասուիլ, այլ թէ պէտք են նմանապէս և վարժապետք. բայց թէ Շուչիի մէջ չկան իրենց կոչմանը արժանի վարժուհիք և պէտք է նրանց Եւրոպայից բերել, սա էլ ակներև է արեւին պէս։

***

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մեր համաքաղաքացի եղբայրակիցների—մանաւանդ զգացողների—մէջ մի չչնջիւն կայ։ Ահա վերջացան մեր հոգևոր դպրոցի քննութիւնները. ահա կարգացվեցան ճառեր և գովեստներ, բայց ո՛ւր է նորա ներքին կեանքի մանրամասնների արտայայտիչը։ Մեր անծանօթ բարեկամ Մ ա ժ ա կ ը արդէն լռելէ. նա ևս երևի խմորվեցաւ մերայինների խմորով, ուրեմն նա ևս ընկա...։

Իսկ ես այս փոքրիկ նամակով ծանուցանում եմ իմ սիրելի եղբայրակիցներին, որ Մ ա ժ ա կ ը անընդունակ է խմորվելու և ընկնելու. և Ձեզ պ. խմբ., չնայելով որ ցարդ ուղարկված նամակներս չեն հրատարակված, խնդրում եմ հրատարակել երկտող գրութիւնս ի գիտութիւն մերայնոց։

Արդէն հասկացաւ ընթերցողը թէ քննութիւնները վերջացան. բայց թէ որքան գովութեան արժանի էին մեծ, աչխատող պարոնների արդիւնքը. ահա պատմեմ մի փոքրիկ, բայց ստոյգ անցք, որից կարելի է իմաստասիրել քննութեան ամբողջ պատկերը։

Հայոց լեզուի քննութեան ժամանակ երկու ուսուցիչ նստած էին գրատախտակի երկու կողմերում. հարցը դեռ աչակերտին չհասած արդէն պատրաստ էին յարգոյ պարոնները երկբորդական լեզու լինել նորան, այնպէս որ ուսուցիչների պատասխանները չատ էին, քան թէ աչակերտինը։

Պարոնների մինը համբերութիւնից դուրս գալով գնաց դէպի գրատախտակը և նստելով ուսուցչի մօտ, ասաց բարձր ձայնով. ես այս ուսուցչին կզբաղեցնեմ իսկ դուք խօսեցեք աչակերտին, բայց երբ նկատեց որ դիմացի ուսուցիչը անլսելի կերպով չարունակում է իւր նոր սկսած ուսուցչութիւնը, կրկնեց,—«Յարգելի պարոն ես համոզուած եմ, որ դուք քերականութեան կանոնները լաւ էք հասկանում, այժմ խնդրում եմ թողէք մեզ իմանալ աչակերտի զարգացման աստիճանը... և այլն։

Ահա Հայոց լեզուն ընթերցող. միւսներից զբաղադրեալ ապրի... իսկ ազգային պատմութեան քննութիւնը վատ չէր։

Ունիմ ուրիշ չատ նկատողութիւններ, որը առայժմ թողնում եմ. որովհետև մեծ. Հոգաբարձուներից մինը, որը կառավարում է սորա ուսումնական մասը, ինչպէս լսում ենք, ձեռակերպում է ուսումնարանիս քննութեան նկարագրութիւնը... սպասենք ուրեմն...։

Մեր մայր եկեղեցւոյ Նորընտիր երիցփոխան պ. Ն. Տէր Ներսիսեանը տիպոված ինչ ինչ հանգամանքից արձակուրդ է խնդրում։ Ձչմարիտ ցաւալի է մեզ զրկվել մի այդպիսի խոհական երեցփոխանից. բայց եթէ տեղական Հոգ. կառ. չպէտ այդ երևոյթի առաջը առնել ըստ արժատի այդ երևոյթի առաջը առնել ըստ արժատնոյն, այն ժամանակ անհրաժեշտ պարտք կհամարեմ ինձ բացադրել նորա հրաժարման բուն չարժառիթը...։

Ցուլիս—1873 թիւ. Մաժակ

Մենք ստացանք Կովկասի գաւառական մի քաղաքից հետևեալ նամակը դ ե ր մ ա ն ե ր է ն լեզուով, որի թարգմանութիւնը տպում ենք այստեղ։

Ցարդոյ Պարոն

Առանձին հետաքրքրութեամբ կարդացի ես ձեր խմբագրած «Մշակ» լրագիրը և ճչմարիտ ուրախանում եմ այն ուղղութեան մասին որին լրագիրդ հետևում է, բայց ես առաւել այն ընդունելութեան մասին, որ նա գտել է մեր անչարժ և ամենայն նորութեան համար փակված ազգի մէջ։ Ցանկանում եմ միայն որ ձեզանից տարածված սերմերը յարմար գետնի վերա ընկնեն և որ ընթերցողները կարդացածի վերա փոքր ինչ մտածէին ևս։ Մբատաւոր աչխատանքի համար այսպիսի մի ծոյլ ազգ ինչպէս մեր հայոցը չատ հազուագիւտ է. ասես թէ Աստուածը խլել է մեզանից խորհելու ամենայն միջոցները։ Մեր ազգայինները այնքան խրված են նիւթական օգուտների մէջ, որ ամենայն գաղափար նոցա համար զրօյին է հաւասար, և միայն այն ժամանակ նչանակութիւն ունի, երբ դա կարող է իրրև վաստակի միջոց ծառայել։ Ես չգիտեմ ինչ վաստակի միջոց ծառայել։ Ես չգիտեմ ինչ վիճակ։» Երիտասարդը յոյսը կըտրած գնում է մատեանը ձեռքին մի գերապատիւի մօտ, որ նոյնպէս հրաժարվում է մասնակցութիւնից ասելով թէ «որովհետև սկիզբն մատեանը ինձ մօտ չէք բերել, ուստի ես անդամ գրվել չեմ կարող և ստորագրել ինձանից չատ ստորներից ներքև»։

***

Գետաչէն գիւղի դպրոցի վիճակն վատ դրութեան մէջ է, վարժապետն հոգաբարձուի որդին ծեծելու պատճառով աքսորվեց. նախագահն նոյն դպրոցի հոգաբարձութեան, որ է յայլորդն Գանձակու, նոյն դպրոցի վերա վարժապետ ընտրեց մէկ Ղարաբաղցի երիտասարդ։ Ժողովուրդն չէ համաձայն, վասն որոյ կայ ուսումնարան, հոգաբարձուներ և վարժապետ, իսկ գլխաւորն, որ է աչակերտ ոչ մի հատ։

***

«Մեղու Հայաստանի» լրագրում կարդում ենք որ Էջմիածնայ մէջ հայր Վահան Բ ա տ մ ա ն ց ը դիտաւորութիւն ունի հրատարակել մի նոր լրագիր «Դպրոց» անունով։

***

„Биржа“ լրագիրն հաղորդում են, որ Օրէնբուրգի գաւառումը Մ իա ս կ ի թագաւորական գործարանի մօտերքումը գտել են ո ս կ ե այ չատ ճոխ մի հանք, որի մագանի 100 փութը 7 ֆունտ ոսկի է պարունակում՝ մի քանակութիւն, որ չատ մեծ է և գրեթէ անհաւատալի։ Ասում են որ մի քանի մարդիկ, որը բովագործութեան մասնակից էին, արդէն ժամանակ են ունեցել հարստանալու։

***

1872 թուին Ռուսաստանից վաճառահանվել է դէպի Ամերիկայի Միացեալ Նահանգները 2,625,334 դօլլարի ապրանք (դլխաւորապէս՝ մազ, կանեփ, վուշ, դոցանից պատրաստված արդիւնքը և երկաթը)։ Իսկ Ամերիկայից դէպի Ռուսաստան այս միջոցին վաճառահանած նիւթերի արժէքը հասնում է 8,586,738 դօլլարի։ Նիւթերն են գլխաւորապէս՝ պէտրօլէում (մաքրած նաֆթա) և բամբակ։

***

Կովկասի սարերի չղթայի վրա երկաթուղու համար անելու հետազօտութիւնները յանձնվեցան, որպէս լսում ենք, պարոն Ստատկովսկուն, որի համար գումարը նչանակվեցաւ 47 հազար րուբլ։

***

Тиф. Вѣст. լրագիրը հաղորդում է, որ աւազակների խմբերը հասնում են մինչև անգամ Թիֆլիսի չրջակայքը (այսինքն գիւղերը որը Թիֆլիսից մի վերստ հեռու են), այնպէս որ գիչերանքան մի վերստ հեռու են), այնպէս որ գիչերապահ զօրքերը նչանակվում են կարգապահութեան համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

„Morning Post“ լրագիրը մի թղթակցութեան մէջ Թ է հ ր ա ն ի ց տպում է հետևեալ տեղեկութիւնները, թէ ի՞նչ կարծիքի է Պարսից Հասարակութիւնը Շ ա հի ճանապարհորդութեան մասին։ Ն ե ր օ պ ա ց ի ք կարծում են որ նորա անչափ մեծ պատիւ են արել ասիական մի իշխանին նրան ամեն տեղ այդ շքեղ ձևով ընդունելով, բայց Պարսից Հասարակական կարծիքին նայելով, եւրօպացիքը պարտական են Պարսից Շ ա հին, որ այդ վերջինը պատուից նրանց իր այցելութեամբ։ Իր միամտութեան մէջ Պարսից թագաւորը ձչմարիտ կարծում է որ նա թ ա գ ա ւ ո ր ն ե ր ի թ ա գ ա ւ ո ր է....

Ահա ինչ ձևով են գրած Պարսկաստանի պաշտօնական հաղորդութիւնները Շ ա հի ճանապարհորդութեան մասին։ „Շ ա հին—Շ ա հը բարեհաճեց Անգլիայի թագուհուն պատիւ անել մի վիճակաղութեան Ուինդզորի մէջ տեղի ներկայ գտնվելով“. կամ այսպէս „Հ ո ղ ո ր և մեծ Շ ա հին—շահը պատուեց Պրինց Ուէլսին, բարեհաճելով ընդունել նրա մօտ մի ընթրիք“. և այլն։

Ինչ որ վերաբերում է վերանորոգութիւններին Պարսկաստանի մէջ,—նրանց մասին դրած են տեղեկութիւն դեռ ևս չէ կարող տալ թղթակիցը։ Նա կարծում է միայն, որ հաղիւ կարող է աջողվել որ և է փոփոխութիւն կառավարութեան մէջ, որովհետև մ օ լ լ ա-

ՇՎԷՑՑԱՐԻԱ

Ժնէվ քաղաքից տեղեկացնում են օգոստոսի 7-ից (19-ից), որ այդ քաղաքում վերջին ժամանակ բնակող դուքս Կարլ Բ ր ա ւ ն շ վ է յ գը, յանկարծակի մեռաւ արիւնի հարվածից։ Նա թողել է մի կտակ, որտեղ պահանջում է, որ քնեն նրա մարմինը, արդիօք թունաւորված չէր նրա կազմվածքը, և յետոյ թաղեն նրան թագաւորական ծագման վայել փառքով։ Նրա գերեզմանի վրա պիտի փառաւոր արձան կանգնեցնեն։ Դուքսը վերջին ժամանակները իր երկրից ժողովրդի ձեռքով 1830 թուին աքսորված լինելով ապրում էր կամ Փարիզում կամ Ժնէվում, և յայտնի էր իր շռայլ և չքեղ կեանքով։ Նրա բոլոր պարապմունքն էր կառքերով մանգալ, չքեղ կերպով հագնվիլ, սիրականներ ունենալ, լաւ ուտել ու խմել։ Դուքսը կտակում է Ժ-

ՆՈՐԵՐՈՒՄ

Նորերումս Ռէլգիայի պարլամէնտը ընդունեց 94 ձայների բազմութեամբ 3 ձայնի դէմ մի օրէնքի առաջարկութիւնը, որով այն գաւառներում, ուր որ Ֆլամանական լեզուն (Հոլլանդականի մի բարբառ) սիրապետող է, բոլոր դատագործութիւնը այս լեզուով պիտի կատարվի։ Ա յս օրէնքը տարածվում է ութեն Ֆլանդր, Անտվերպէն, Լիւքսէնբուրգ և Լ է օվէն գաւառներում։ „C. Пет. Вѣд.“ լրագիրը խօսելով իր 232 համարի առաջնորդող յօդվածի մէջ այս հարցի մասին, այն հետևանքի է հանում, որ այս օրէնքը նշանակութիւն ունի ոչ միայն Ռէլգիայի համար, այլ և բոլոր ուրիշ երկիրների համար, ուր առաջ են գալիս համապատասխան հասարակական երևոյթները, այսինքն ուր որ մի և նոյն պետութեան զանազան գաւառներում, այլ և այլ գաւառական լեզուներ են գործածական։ Յօդվածագիրը ուշադրութիւն է դարձնում Ա ւստրիայի համար այդ տեսակ օրէնքի օգտաւէտութեան վրա, և հերքում է կենդրոնական սկիզբը դատագործութեան մէջ, որ ընդունված է Ֆրանսիայում և Պրուսիայում։

ՇՎԷՑՑԱՐԻԱ

Ժնէվից քաղաքից տեղեկացնում են օգոստոսի 7-ից (19-ից), որ այդ քաղաքում վերջին ժամանակ բնակող դուքս Կարլ Բ ր ա ւ ն շ վ է յ գը, յանկարծակի մեռաւ արիւնի հարվածից։ Նա թողել է մի կտակ, որտեղ պահանջում է, որ քնեն նրա մարմինը, արդիօք թունաւորված չէր նրա կազմվածքը, և յետոյ թաղեն նրան թագաւորական ծագման վայել փառքով։ Նրա գերեզմանի վրա պիտի փառաւոր արձան կանգնեցնեն։ Դուքսը վերջին ժամանակները իր երկրից ժողովրդի ձեռքով 1830 թուին աքսորված լինելով ապրում էր կամ Փարիզում կամ Ժնէվում, և յայտնի էր իր շռայլ և չքեղ կեանքով։ Նրա բոլոր պարապմունքն էր կառքերով մանգալ, չքեղ կերպով հագնվիլ, սիրականներ ունենալ, լաւ ուտել ու խմել։ Դուքսը կտակում է Ժ-

***

«Սուրհ» լուսթի 18-ի օրուան, տարաբաղդ կամ դուռ ձեռ՝ ցուցաց ասելու ընդունելութիւնը, որ նորա ընթերցողներուն ցոյց կու տայ, որ ան ոչ միայն ազգային հոգեբանական զարգացման հետ քայլ մը պահած է, այլ նաեւ ամենէն առաջադէմ տարրերուն հետ ալ ոտք ոտքի կը քալէ։

***

Ինչպէս կը տեսնուի ի Լիմասոլ 1864 և 1866 տարիներ չէ հրատարակուած Ա. Ս. Ա. Ք. Ե. Ա. Ն. Ի. Ա. Ն. Ց. Ա. Ն. Ց. Ա. Ն. Ց